Մարտին Շահբազյան

Մարտին Հաբեթի Շահբազյանը ծնվել է 1940 թ. հունիսի 25-ին, Երևանում, բանվորի ընտանիքում: 1958 թ. ավարտել է Նար-Դոսի անվան միջնակարգ դպրոցը: Ուսման տարիներին, սկսած 6-րդ դասարանից, հաճախել է Ղուկաս Ղուկասյանի անվան պիոներների պալատի լուսանկարչական խմբակ: Դպրոցն ավարտելուց հետո, որպես արտահաստիքային թղթակից, համագործակցել է Հայաստանի մի շարք լրատվամիջոցների հետ: 1959 թ. ընդունվել է աշխատանքի Երևանի ոսկերչական գործարանում, իսկ 1966 թվականից հաստիքային ֆոտոլրագրողի կարգավիճակով աշխատել է «Ռյա Թազա», «Հայրենիքի ձայն» և «Կոմունիստ» թերթերում:
1974-1976 թթ. աշխատել է ԽՍՀՄ «Նովոստի» տպագրության գործակալության (АПН-**Агентство печати «Новости»**) Հայաստանի մասնաճյուղում՝ որպես սեփական թղթակից, այնուհետև շուրջ 15 տարի՝ «Արմենպրես» գործակալությունում: 2001-ից ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի գրասենյակի ֆոտոթղթակիցն է:
1968 թ.-ից ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ է, բազմիցս մասնակցել է միջազգային, միութենական ու հանրապետական ցուցահանդեսների, ունի տասնյակ մրցանակներ ու դիպլոմներ, Ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի (ԺՏՆՑ) բրոնզե մեդալի եռակի դափնեկիր է, երեք անգամ էլ ճանաչվել է ՏԱՍՍ-ի լավագույն լուսանկարիչ: 1988 թ. Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված լուսանկարներից մեկը «Reuter» գործակալության կողմից արժանացել է «Տարվա լավագույն լուսանկար» մրցանակին:
Մարտին Շահբազյանն անհատական ցուցահանդեսներ է բացել Աֆղանստանում, Արաբական Միացյալ Էմիություններում, Բուլղարիայում և Երևանում: «Հայաստանի խաչքարերը», «Իմ Հայաստան», «Երկրաշարժ», "Հայաստանի մարզեր" գրքերի հեղինակն է: ՀՀ վաստակավոր լրագրող է (1996), այսօր էլ շարունակում է ստեղծագործել: